ՊԱՅՄԱՆԱԳԻՐ № «ԲԷՑ-ԳՀԱՇՁԲ-18/14»
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

ք.Երևան «12» հունիսի 2018 թ.

«Բարձրավոլտ Էլեկտրացանցեր» փակ բաժնետիրական ընկերությունը, ի դեմս գլխավոր տնօրենի պաշտոնակատար Ա. Հովակիմյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու) մի կողմից, և

«Ֆիքսիթ ԻԹ Քոմփանի» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը, ի դեմս ընկերության տնօրեն Ս. Թադևոսյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող) մյուս կողմից,

յուրաքանչյուրն առանձին այսուհետ՝ Կողմ, իսկ երկուսը միասին հիշատակման դեպքում՝ Կողմեր, կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին.

Հոդված 1. ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

i. **«Պայմանագիր»** - Աշխատանքի կատարման Պայմանագիր,

ii. **«Աշխատանքներ»** - Կատարողի կողմից Պատվիրատուի պահանջով Պայմանագրի և Համաձայնագր(եր)ի շրջանակներում իրականացվող Աշխատանքը: Կատարվող Աշխատանքի նկարագրությունը տրվում է Պայմանագրի անբաժանելի մասը կազմող Տեխնիկական բնութագրում,

iii. **«Տեխնիկական բնութագիր»** - Աշխատանքի ամբողջական նկարագիր, որը բացառում է այլընտրանքային մեկնաբանությունը, ինչպես նաև Աշխատանքի անվանումը, Աշխատանքի հատկանիշը, չափման միավորը, քանակը, երաշխիքային ժամկետը, Աշխատանքի կատարման վայրը, որակի, Աշխատանքի արդյունքների, ինչպես նաև դրանց հետ կապված այլ պահանջների և ընթացակարգերի հստակ նկարագրությունը ներառող փաստաթուղթ **(Հավելված 1),**

iv. **«Գնման ժամանակացույց»** - Աշխատանքի կատարման ժամանակահատված, որը ներառում է դրա սկիզբն ու ավարտը **(Հավելված 2),**

v. **«Աշխատանքի գին»** - այն գումարը, որը Պատվիրատուն պարտավորվում է վճարել Կատարողին Աշխատանքի պատշաճ, ամբողջական և լրիվ կատարման համար, որը ներառում է ՀՀ օրենսդրությամբ կիրառելի բոլոր հարկերը: Պայմանագրի գինն իր մեջ ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը,

vi. **«Վճարման ժամանակացույց»** - այն ժամկետը, որի ընթացքում Պատվիրատուն պարտավոր է վճարել Գինը: Մասնավորապես, Վճարման ժամկետն է Աշխատանքի պատշաճ, ամբողջական և լրիվ կատարման վրա հիմնված հանձնման-ընդունման ակտի/արձանագրության ստորագրման պահից սկսած 30 օրացուցային օր ժամկետը **(Հավելված 3),**

vii. **«Ակտ» -** Պայմանագրի մի մասի կատարման արդյունքի հանձնման-ընդունման վերաբերյալ կազմված, Կողմերի միջև ստորագրված փաստաթուղթ **(Հավելված 4):**

viii. **«Հանձնման-ընդունման արձանագրություն»** - Պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը հաստատելու վերաբերյալ կազմված, Կողմերի միջև ստորագրված փաստաթուղթ **(Հավելված 5),**

ix. **«Պայմանագրի պայմաններ»** - Պայմանագրի առարկա, Վճարման ժամանակացույց, Պայմանագրի գին, որակ, Աշխատանքի կատարման ժամկետ, երաշխիքային ժամկետ և այլն,

x. **«Ներկայացուցիչ»** - Պատվիրատուի և/կամ Կատարողի կողմից նշանակված և վերջիններիս կողմից լիազորված անձ, Պատվիրատուի ներկայացուցիչը Կատարողին (Կատարողի ներկայացուցչին) տալիս է Աշխատանքի կատարման համապատասխան պատվեր-առաջադրանք, վերահսկում է վերջինիս գործունեությունը՝ Աշխատանքները պատվեր-առաջադրանքի շրջանակներում կատարելու մասով: Ներկայացուցիչը լիազորում է Պատվիրատուի և/կամ Կատարողի (գլխավոր) տնօրենի կողմից տրված լիազորագրով:

Հոդված 2. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

2.1. Կատարողը պարտավորվում է Պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել Պայմանագրի Տեխնիկական բնութագրով նախատեսված **220 կՎ ենթակայանների միկրոպրոցեսորային ռելեների, կապի մոդուլների վերանորոգման** Աշխատանքները, իսկ Պատվիրատուն պարտավորվում է վճարել Աշխատանքի գինը՝ համաձայն Վճարման ժամանակացույցի:

2.2. Պայմանագրի առարկան սահմանափակվում է միայն Պայմանագրի սույն հոդվածում նշվածով և Տեխնիկական բնութագրի բովանդակությամբ, և սույն հոդվածի շրջանակներից դուրս կատարված ցանկացած այլ Աշխատանք ենթակա չէ վճարման, եթե այլ բան նախապես չի համաձայնեցվել Կողմերի միջև:

Հոդված 3. ԱՇԽԱՏԱՆՔԻ (ԵՎ/ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ) ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

3.1 Կատարված Աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը հաստատվում է Պայմանագրի Տեխնիկական բնութագրով նախատեսված Աշխատանքի ավարտից հետո Պատվիրատուի և Կատարողի միջև Աշխատանքի հանձնման-ընդունման արձանագրությամբ՝ նշելով դրա կազմման ամսաթիվը:

Մինչև Պայմանագրով Աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը հավաստող փաստաթուղթը, իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային

գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը: Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իրեն (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե կատարված Աշխատանքը համապատասխանում է Պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն Պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 30 (երեսուն) աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե կատարված Աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում Պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և Պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար Պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե Պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված Աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված Աշխատանքը համարվում է ընդունված և Պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

3.5 Սույն պայմանագրով երաշխիքային ժամկետ է համարվում՝ Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օրացուցային օր:

Հոդված 4. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

4.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

4.1.1 Ցանկացած ժամանակ Ներկայացուցչի միջոցով վերահսկողություն իրականացնել Կատարողի կողմից կատարվող Աշխատանքի ընթացքի և որակի նկատմամբ՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

4.1.2 Կատարողի կողմից Պայմանագրում նշված ժամկետի խախտման դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանել Աշխատանքների կատարման նոր ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրով նախատեսված տույժը:

4.1.3 Չընդունել Աշխատանքը՝ ՀՀ օրենսդրության և Պայմանագրի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ սահմանելով թերությունների անհատույց վերացման կողմերի համար ընդունելի ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից 3 աշխատանքային օրվա ընթացքում վճարելու պայմանագրով նախատեսված տույժը և տուգանքը:

4.1.4 Միակողմանի լուծել Պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կատարողը ժամանակին չի սկսում Աշխատանքի կատարումը, ինչի հետևանքով պայմանագրով նախատեսված ժամկետում ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կատարողի կողմից կատարված Աշխատանքը չի համապատասխանում Տեխնիկական բնութագրով սահմանված պահանջներին,

գ) Կատարողը խախտել է Գնման ժամանակացույցը:

4.2. Պատվիրատուն պարտավոր է՝

4.2.1 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կատարողի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված Աշխատանքը (դրա արդյունքը), իսկ դրա՝ Պայմանագրի Տեխնիկական բնութագրով սահմանված պահանջներից շեղումներ կամ այլ թերություններ հայտնաբերելու դեպքում՝ անհապաղ հայտնել Կատարողին.

4.2.3 Պայմանագիրն ուժի մեջ մտնելու պահից 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին տրամադրել Աշխատանքի կատարման համար համապատասխան տարածք.

4.2.4 Պայմանագրով նախատեսված ժամկետում Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել Աշխատանքի գինը:

4.3. Կատարողն իրավունք ունի՝

4.3.1 Պայմանագրով նախատեսված ժամկետում Աշխատանքի արդյունքը հանձնելու և Պատվիրատուի կողմից այն ընդունելու և հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու Պայմանագրով նախատեսված Աշխատանքի գինը:

4.3.2 Պատվիրատուի կողմից Վճարման ժամանակացույցով նախատեսված ժամկետների խախտման դեպքում պահանջել վճարել Պայմանագրով նախատեսված տույժը:

4.4. Կատարողը պարտավոր է՝

4.4.1 Կատարել Աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի ցուցումները, եթե դրանք չեն հակասում Պայմանագրի պայմաններին.

4.4.2 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան անհապաղ տեղեկացնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է Աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին.

4.4.3 Աշխատանքների կատարման ժամանակացույցով նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից Աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանելու դեպքում, ապահովել Աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել Պայմանագրով նախատեսված տույժը.

4.4.4 Պայմանագրով նախատեսված հիմքերով Պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել Պայմանագրով նախատեսված տուգանքը.

4.4.5 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

Հոդված 5.ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

5.1 Պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 8.500.000 (ութ միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ:

Կատարողը չի հանդիսանում ԱԱՀ վճարող:

5.2 Աշխատանքի կատարման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

5.4 Պատվիրատուն կատարված Աշխատանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի՝ Պայմանագրում նշված հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության և հաշիվ-ապրանքագրի հիման վրա՝ Վճարման ժամանակացույցով նախատեսված չափերով և կարգով:

Հոդված 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կատարողը պատասխանատվություն է կրում կատարված Աշխատանքի որակի և Աշխատանքի կատարման ժամանակացույցով նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Պատվիրատուն իրավունք ունի Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձել տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 1 (մեկ) տոկոսի չափով:

6.3 Պատվիրատուի կողմից պայմանագրով նախատեսված ժամկետների խախտման համար Կատարողն իրավունք ունի Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկել տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կատարողին վճարվող գումարների հետ:

6.5 Պայամանագրով չնախատեսված դեպքերում Կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.6 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

Հոդված 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների Աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով սահմանված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել Պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

Հոդված 8. ԿԻՐԱՌԵԼԻ ԻՐԱՎՈՒՆՔԸ ԵՎ ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

8.1. Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.2. Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով՝ 15-օրյա ժամկետում: Նշված ժամկետում համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով: Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

Հոդված 9. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԼՈՒԾՈՒՄԸ

9.1. Պայմանագիրը ենթակա է վաղաժամկետ լուծման Պատվիրատուի նախաձեռնությամբ, նախապես, 10 (տասը) օր առաջ Կատարողին ծանուցելու միջոցով՝ պահպանելով Պայմանագրի 4.2 կետով նախատեսված իր պարտականությունը.

9.2. Պայմանագիրը ենթակա է վաղաժամկետ լուծման Կատարողի նախաձեռնությամբ, նախապես, 10 (տասը) օր առաջ Պատվիրատուին ծանուցելու

միջոցով՝ չդադարեցնելով Պայմանագրի 4.4 կետով նախատեսված իր պարտականությունների կատարումը:

Հոդված 10. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

10.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ Պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

10.2 Պայմանագրի շրջանակներում ծանուցումները վավեր են, եթե դրանք ուղարկվել են Կողմերին՝ փոստով կամ էլեկտրոնային փոստով և ստորագրված են Կողմերի (նրանց ներկայացուցիչների) կողմից:

Կողմերը պարտավոր են միմյանց հայտնել պայմանագրի գործողության ընթացքում իրենց հասցեն փոխելու մասին և նման հաղորդման բացակայության դեպքում ծանուցումներն ուղարկվում են նրանց վերջին հայտնի հասցեով և համարվում են հանձնված:

10.3 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ Համաձայնագիր կնքելու միջոցով: Համաձայնագրերը հանդիսանում են Պայմանագրի անբաժանելի մասը:

10.4 Աշխատանքների կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում, սույն կետով սահմանված դեպքում Աշխատանքների կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ՝ մինչև 30 օրացուցային օրով:

10.5. Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Սույն կետով սահմանված ծանուցումն ինտերնետային կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից Կատարողը համարվում է Պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ պատշաճ ծանուցված:

10.6. Պայմանագրի Կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

10.7.Պայմանների ցանկացած փոփոխություն և լրացում վավեր է միայն Կողմերի գրավոր համաձայնության դեպքում:

10.8. Պայմանագիրը կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկ օրինակ:

10.9 Պայմանագիրը բաղկացած է հետևյալ հավելվածներից.

Հավելված 1 – Տեխնիկական բնութագիր,

Հավելված 2 – Գնման ժամանակացույց,

Հավելված 3 – Վճարման ժամանակացույց,

Հավելված 4 – Պայմանագրի մի մասի կատարման արդյունքի հանձնման-ընդունման ԱԿՏ,

Հավելված 5 – Պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը հաստատելու վերաբերյալ Հանձնման-ընդունման արձանագրություն:

Հոդված 11. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ	« Ֆիքսիթ ԻԹ Քոմփանի » ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան Անդրանիկի 1	Հասցե՝ ք. Երևան, Արամի 64/119
«Հայբիզնեսբանկ» «Մալաթիա» մ/ճ	« Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1150001172630300	Հ/Հ 15700-13826370100
ՀՎՀՀ 01522459	ՀՎՀՀ 02607072
_____ Ա. Հովակիմյան	_____ Ս. Թադևոսյան
(ստորագրություն)	(ստորագրություն)

Հավելված N 1
«12» 06 2018թ. կնքված
«ԲԷՑ-ԳՀԱՇՁԲ-18/14» ծածկագրով Պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

N	Աշխատանքի անվանումը	Քանակը	Աշխատանքի նկարագիր
1.	Միկրոպրոցեսորային ABB REF 542, P442, P120,P432,P139,P441,7SS523 ռելեների, BM-9100, BM-9200 կապի մոդուլների վերանորոգման աշխատանք	10 հատ	1. Վնասված ռելեների ախտորոշում /անհրաժեշտության դեպքում ենթակայանում/ 2. Վնասված մասերի/օղակների/ և հնարավոր պատճառների վերաբերյալ տեղեկության տրամադրում 3. Ռելեների վերանորոգում 4. Վերածրագրավորում, գործող կարգավորումների ներբեռնում 5. Վերանորոգված ռելեների տեղադրում և կարգավորում ենթակայանում՝ ԲԷՑ ՌՊԱ և ԲՓԾ աշխատակիցների հետ համատեղ 6. Ռելեների ինտեգրում SCADA լոկալ համակարգում 7. Փորձարկում
Աշխատանքի կատարման վայրը		«Շահումյան-2» ենթակայան (ք.Երևան, Մալաթիա-Սեբաստիա, Տիչինայի 207), «Կամո-2» ենթակայան (ք.Գավառ, Սայադյան 113), «Վանաձոր-2» ենթակայան (ք.Վանաձոր, Թևոսյան 2), «Ալավերդի-2» ենթակայան (ք.Ալավերդի, Սանահին-Ակներ)	

Այլ պայմաններ	
Աշխատանքի կատարումը	Աշխատանքը պետք է կատարվի «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ ՌՊԱ և ԲՓ ծառայության կողմից ներկայացված (էլ. փոստի և հեռախոսի միջոցով) հայտի հիման վրա: Այցը հայտում ներկայացված հասցե պետք է իրականացվի 72ժ ընթացքում, աշխատանքը կատարող կազմակերպության միջոցներով: Բոլոր աշխատանքները պետք է կատարվեն ժամանակին և որակյալ: Ենթակայանում կատարվող աշխատանքները պետք է իրականացվեն ՌՊԱ և ԲՓ ծառայության աշխատակիցների ներկայությամբ: Անհրաժեշտությունից ելնելով աշխատանքը կատարվում է Կատարողի համապատասխան արհեստանոցներում, որի դեպքում սարքավորման (սարքավորումների) տեղափոխությունները իրականացվում են Կատարողի ուժերով և միջոցներով: Սարքավորումների վերանորոգումը պետք է իրականացնել հայտի ստացման օրվանից 30 աշխատանքային օրվա ընթացքում: Աշխատանքի ընթացքում օգտագործվող պահեստամասերի

	արժեքները ներառվում են աշխատանքների ընդհանուր գնի մեջ
Երաշխիքային ժամկետը	Չորս չափաբաժիններով նորոգված մասերի երաշխիքային սպասարկման ժամկետը սահմանվում է աշխատանքն ընդունելու օրվանից հաշված առնվազն մեկ տարի:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ
Հասցե՝ ք. Երևան Անդրանիկի 1
«Հայբիզնեսբանկ» «Մալաթիա» մ/ճ
Հ/Հ 1150001172630300
ՀՎՀՀ 01522459

Ա. Հովակիմյան
(ստորագրություն)

ԿԱՏԱՐՈՂ

« Ֆիքսիթ ԻԹ Քոմփանի » ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Արամի 64/119
« Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 15700-13826370100
ՀՎՀՀ 02607072

Մ. Թադևոսյան
(ստորագրություն)

Հավելված N 2
«12» 06 2018թ. կնքված
«ԲԷՑ-ԳՀԱՇՁԲ-18/14» ծածկագրով Պայմանագրի

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Աշխատանքի կատարման ժամանակահատվածը	
Աշխատանքի կատարման սկիզբը	**Աշխատանքի կատարման ավարտը**
Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից	1 տարի

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ
Հասցե՝ ք. Երևան Անդրանիկի 1
«Հայբիզնեսբանկ» «Մալաթիա» մ/ճ
Հ/Հ 1150001172630300
ՀՎՀՀ 01522459

Ա. Հովակիմյան
(ստորագրություն)

ԿԱՏԱՐՈՂ
« Ֆիքսիթ ԻԹ Քոմփանի » ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Արամի 64/119
« Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 15700-13826370100
ՀՎՀՀ 02607072

Ս. Թադևոսյան
(ստորագրություն)

Հավելված N 3
« 12 » 06 2018 թ. կնքված
«ԲԷՑ-ԳՀԱՇՁԲ-18/14» ծածկագրով Պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

Երկկողմ ստորագրված հաշիվ-ապրանքագրի և հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա 30 օրացուցային օրվա ընթացքում:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ
Հասցե՝ ք. Երևան Անդրանիկի 1
«Հայբիզնեսբանկ» «Մալաթիա» մ/ճ
Հ/Հ 1150001172630300
ՀՎՀՀ 01522459

Ա. Հովակիմյան
(ստորագրություն)

ԿԱՏԱՐՈՂ
« Ֆիքսիթ ԻԹ Քոմփանի » ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Արամի 64/119
« Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 15700-13826370100
ՀՎՀՀ 02607072

Ս. Թադևոսյան
(ստորագրություն)

Հավելված N 4
« » 20 թ. կնքված
«ԲԷՑ-ԳՀԱՇՁԲ-18/14» *ծածկագրով Պայմանագրի*

ԱԿՏ №
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

Սույնով արձանագրվում է, որ «Բարձրավոլտ Էլեկտրացանցեր» ՓԲ ընկերության (այսուհետ՝ Պատվիրատու) և _____ (այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____ Պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _ _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված Աշխատանքները.

Աշխատանքների անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց **Ընդունեց**

_____ _____
ազգանուն, անուն ազգանուն, անուն

_____ _____
ստորագրություն ստորագրություն

Հավելված 5
« » 20 թ. կնքված
«ԲԷՑ-ԳՀԱՇՁԲ-18/14» *ծածկագրով Պայմանագրի*

ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № ____
Պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու
փաստը հաստատելու վերաբերյալ

ք. Երևան « » _____ 2018 թ.

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» փակ բաժնետիրական ընկերությունը, ի դեմս գլխավոր տնօրեն Ա. Հովակիմյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու) մի կողմից, և

«Ֆիքսիթ ԻԹ Քոմփանի» սահմանապակ պատասխանատվությամբ ընկերությունը՝ ի դեմս տնօրեն Ս. Թադևոսյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ «Կատարող»), մյուս կողմից

Յուրաքանչյուրն առանձին այսուհետ «Կողմ», իսկ երկուսը միասին այսուհետ՝ «Կողմեր», հիմք ընդունելով № **«ԲԷՑ-ԳՀԱՇՁԲ-18/14»** աշխատանքների կատարման պայմանագիրը, կնքեցին սույն Հանձնման-ընդունման արձանագրությունը՝ հետևյալի մասին.

(1) Կատարողը հանձնում է, իսկ Պատվիրատուն ընդունում թիվ № **«ԲԷՑ-ԳՀԱՇՁԲ-18/14»** Պայմանագրով նախատեսված **220 ԿՎ ենթակայանների միկրոպրոցեսորային ռելեների, կապի մոդուլների վերանորոգման** Աշխատանքները՝

(2) Պատվիրատուն հավաստում է, որ Հանձնման-ընդունման արձանագրության ստորագրման պահին Աշխատանքները կատարված են Պայմանագրի բոլոր պայմանների պահպանմամբ և Պատվիրատուն չունի որևէ պահանջ՝ կապված Աշխատանքների կատարման հետ:

(3) Կողմերը հավաստում են, որ Հանձնման-ընդունման արձանագրության ստորագրման պահին միակ պարտականությունը Պայմանագրով Սահմանված Աշխատանքների Գնի վճարման պարտականությունն է:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	**ԿԱՏԱՐՈՂ**
«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ	« Ֆիքսիթ ԻԹ Քոմփանի » ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան Անդրանիկի 1	Հասցե՝ ք. Երևան, Արամի 64/119
«Հայբիզնեսբանկ» «Մալաթիա» մ/ճ	« Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1150001172630300	Հ/Հ 15700-13826370100
ՀՎՀՀ 01522459	ՀՎՀՀ 02607072
_____ **Ա. Հովակիմյան**	_____ **Ս. Թադևոսյան**
(ստորագրություն)	(ստորագրություն)